Հայտարարություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Դրամաշնորհ No. TF016980

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Հայաստանում Երիտասարդների ներգրավվածության խթանման» դրամաշնորհային ծրագրի /ԵՆԽԾ/ շրջանակում **«Ծրագրի տարածքային համակարգողների»** հանձնարարականի իրականացման համար խորհրդատուներ ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ընտրել հինգ տարածքային համակարգողներ՝ մեկական համակարգող ՀՀ Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի եւ Սյունիքի մարզերից յուրաքանչյուրի համար: Ընտրված տարածքային համակարգողները պետք է ապահովեն իրենց հանձնարարված թիրախային մարզերում եւ համայնքներում Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը, դրանց արդյունավետ իրականացումն ու ամենօրյա վերահսկողությունը, հանրային կապերի եւ իրազեկման աշխատանքները:

Խորհրդատուները պետք է իրականացնեն հետեւյալ առաջադրանքները՝

1. *Նախնական վերլուծություն անցկացնեն պարզելու իրենց համակարգման տարածքում ԵՆԽԾ-ի միջոցառումների իրականացման նախադրյալները, այդ թվում՝*
    - հստակեցնելու համակարգման տարածքի երիտասարդության սոցիալական խնդիրների ընդհանուր նկարագիրը, հավաքելու տեղեկություններ այդ համայնքների եւ նրանց հիմնախնդիրների, մասնավորապես երիտասարդության եւ զբաղվածության խնդիրների վերաբերյալ,
    - հավաքելու տեղեկություններ ԵՆԽԾ-ի շրջանակներում նախատեսված նախագծերի եւ միջոցառումների իրականացման տեսանկյունից հավանական գործընկերներ կազմակերպությունների, ՁԼՄ-ների, պետական եւ համայնքային մարմինների վերաբերյալ,
    - պարզելու համակարգման տարածքում ԵՆԽԾ-ի շրջանակներում նախատեսված նախագծերի ու միջոցառումների արդյունավետ իրականացման հետ կապված պոտենցիալ դժվարություններն ու խոչընդոտները:
2. *Ծրագրի համակարգողի հետ քննարկումների համատեքստում մշակեն համապատասխան մարզում Ծրագրի իրականցման փոխհամաձակնեցված պլան:*
3. *Ապահովեն համապատասխան մարզում իրականացվող նախագծերի եւ միջոցառումների համակարգումն ու արդյունավետ իրականացումը,* որը ենթադրում է համակարգման տարածքում ՝

3.1. Ծրագրի շրջանակներում համագործակցության ապահովում մարզային իշխանությունների, սոցիալական ծառայություններ մատուցող եւ երիտասարդության հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ,

3.2. աջակցություն ԵՆԽԾ-ի շրջանակներում նախագծերի ու միջոցառումների համար ընտրված խորհրդատվական կազմակերպությունների եւ այդ նախագծերի ու միջոցառումների իրականացման համար ընտրված համայնքների ՏԻՄ-երի միջև բնականոն համագործակցության հաստատմանը,

3.3. խորհրդատվական ընկերությունների աշխատանքի հսկողություն եւ աջա, Ծրագրի Մոնիթորինգի ու գնահատման համապատասխան մասնագետի հետ բոլոր նախագծերի ու միջոցառումների կատարման ընթացքի վերահսկում, այդ նպատակով պարբերական այցելությունների իրականացում շահառու

համայնքներ, արդյունքների վերաբերյալ ամսական հաշվետվությունների ներկայացում Ծրագրի համակարգողին,

3.4. ԵՆԽԾ-ի շրջանակներում իրականացվող ծրագրային միջոցառումների համար խորհրդակցությունների կազմակերպում եւ վարում,

3.5. մասնակցություն ԵՆԽԾ ենթածրագրերի առաջարկների եւ գնահատման ձեւերի ու ընթացակարգերի մշակմանը,

3.6. աջակցություն ենթածրագրերի (միջոցառումների) իրականացման համար ներկայացված տեխնիկական եւ ֆինանսական առաջարկների, ենթադրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատմանը եւ այլն:

4. *ԵՆԽԾ-ի իրականացման հարցերում աջակցեն՝* Ծրագրի համակարգողին, Ծրագրի համակարգոց գրասենյակի մասնագետներին իրենց համակարգման տարածքում նախագծերի ու միջոցառումների պլանավորման եւ իրականացման հարցերում, իրականացվելիք ենթածրագրերի տեխնիկական հանձնարարականների մշակման հարցերում եւ այլն:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից-2016թ. մարտ ամիսների ընթացքում:

Խորհրդատուն պետք է բավարարի հետեւյալ որակավորման չափանիշներին եւ պետք է ունենա՝

- համապատասխան ոլորտներում, (Սոցիալական գիտությունների, տնտեսագիտության և հարակից այլ ոլորտներում) բակալավրի աստիճան:
- համայնքային զարգացման ծրագրերում կամ տեղական կազմակերպություններում ղեկավար աշխատանքի փորձ (երիտասարդության և սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրերի իրականացման փորձը կդիտվի որպես առավելություն),
- սոցիալական պաշտպանության և երիտասարդության հիմնահարցերի իմացություն,
- մարզի տարբեր տարածքներ հաճախակի մեկնելու, այնտեղ աշխատանքների իրականացման պատրաստակամություն (տվյալ մարզում մշտական բնակությունը պարտադիր է),
- կազմակերպչական, բանակցություններ վարելու, մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ (զեկույցներ գրելու ունակությունը պարտադիր է),
- հայերենի գերազանց իմացություն (անգլերենի սահուն իմացությունը խիստ ցանկալի է),
- խորացված համակարգչային գիտելիքներ:

Մեծապես խրախուսվում է որակավորված երիտասարդ դիմորդների (30 տարեկան եւ ցածր) մասնակցությունը:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **2015թ. հունիսի 9-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով՝ նշելով ծրագրի անվանումը եւ այն պաշտոնը, որին դիմում եք: Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի պողոտա 4, 3-րդ հարկ
Հեռախոս. (037411) 910 581, 910 590
Էլ. փոստ. info@ffpmc.am